ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-4-1-Ա

ք. Երևան 10.06.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի հունիսի 10-ի նիստում քննարկեց 2014 թվականի ապրիլի 16-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Գելեհեր Լիմիթիդ ընկերության (Members Hill, Brooklands Road, Weybridge, Surrey, KT13 OQU, United Kingdom GB) (այսուհետ՝ բողոքարկող) «LD CLUB LOUNGE» (հայտ №20130714) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 107-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է համարվում 34-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «L&M SLIMS LOUNGE BLUE», L&M SLIMS LOUNGE WHITE» (Ֆիլիփ Մորիս Փրոդաքթս Ս.Ա., CH, Quai Jeanrenaud 3 CH-2000 Neuchatel, Switzerland, CH, N 19329, N 19330) համակցված ապրանքային նշաններին: Կարգի 125-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշանին նման են համարվում նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ, ինչպես նաև հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրի նմանությունը («LOUNGE»), որը ներառված է հայտարկված ապրանքային նշանի

մեջ: Վերոհիշյալը հիմք է հանդիսանում հայտարկվող նշանի գրանցումը մերժելու համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ մերժված ապրանքային նշանի մեջ ներառված է գրանցված ապրանքային նշանի բառային տարրը և հետևաբար այդ ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «LD CLUB LOUNGE» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ